11189

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 09 » 09 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0163-21

Ձեռնարկողը՝ ***ՄԱՀԾ մշտական ներկայացուցիչ***
Ք.Երևան, Պետրոս Ադամյան 14

Գործունեությունը՝ ***«Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների» կառավարման պլանի հիմնադրույթային փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 23 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0163-21
«09» 09 2021թ.

«Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների» կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրույթային փաստաթուղթ - ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հավետվություն, գծագրական նյութեր
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ

Ներածական մաս. Գուգարքի տարածաշրջանի անտառներում ուսումնասիրություններ կատարվել են դեռևս 1890-ական թվականներին, որի համար 1897թ. պատրաստվել է անտառի գնահատման նկարագիր և համապատասխան պլանշետներ:
Անտառի ուսումնասիրությունները շարունակվել են 1920-ական թվականներին՝ կապված ներկայիս Վանաձոր քաղաքում 1928թ. Անտառային գիտահետազոտական կենտրոնի ստեղծման հետ, որի գիտնականների կողմից շուրջ 6 տասնամյակ իրականացվել են հիմնավոր գիտափորձարարական ուսումնասիրություններ:

«Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» (UNDP)GEF ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ գրասենյակի և ՀՀ Տավուշի մարզի «Երիտասարդ անտառաբույծների միավորում» հասարակական կազմակերպության միջև կնքվել է 16.11.2017թ. Ref: RFP 051/17 պայմանագիրը՝ Լոռվա մարզի Գուգարքի և Եղեգնուտի անտառտնտեսությունների կառավարման պլանների վերանայման ծրագրի իրականացման նպատակով՝ հաշվի առնելով կենսաբազմազանության, էկոհամակարգային ծառայությունների, կլիմայի փոփոխության և համայնքների կողմից պաշարների օգտագործման նկատառումները: Լոռու մարզի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանի նպատակն է կայուն անտառտնտեսության վարում և կառավարում առաջիկա 10 տարիների համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) ներկայացված ԱԿՊ նախագիծը՝ /ՌԷԳ հաշվետվությամբ/ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

Համաձայն ծրագրի իրականացվել է՝

- գոյքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,
- կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,

- անտառտնտեսության տարածքում գետերի քանակի և ձգվածության, ջրահավաք ավազանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվություն,
- Լոռու մարզի, և կոնկրետ ծրագրի տարածքում բնակչության զբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,
- նախորդ անտառշինության պլանշետների, անտառծառուտային պլանների և քարտեզ սխեմաների ձեռք բերում և ուսումնասիրություն,
- ժամանակավոր օգտագործման հատկացված հողերի քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,
- անտառտնտեսությունների և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումների ուսումնասիրություն,
- անտառսերմնային տեղամասերի, պլանտացիաների և տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:

Նկարագրական մաս.

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսությունը» գտնվում է ՀՀ հյուսիսում՝ Լոռու մարզում: Անտառտնտեսության տարածքի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում 70կմ: Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման, ինչպես նաև արբանակային պատկերների վերծանման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի ներկայիս սահմանները:

2019 թվականի նոյեմբերի 15-ից «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Գուգարքի անտառտնտեսություն» և «Եղեգնուտի անտառտնտեսություն» մասնաճյուղերի միաձուլման արդյունքում ստեղծվել է «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղը:

Անտառտնտեսությունը հյուսիսում սահմանակցում է՝ Լուսաղբյուր, Սարալանջ, Մեծ Պարնի, Շիրակամուտ, Գոգարան, Շենավան, Արևաշող, Քարաձոր, Նոր Խաչակապ, Արջուտ, Ազնվաձոր, Բազում, Գյուլագարակ, Հոբարձի, Վարդաբլուր և Ձորագյուղ համայնքների վարչական տարածքների հողերին, արևելքում՝ Դսեղ, Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքների վարչական տարածքների հողերին, ինչպես նաև՝ ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջան» ազգային պարկի հողերին: Հարավում սահմանակցում է՝ Խնկոյան, Հարթագյուղ, Ծաղկաբեր, Լեռնավան, Ջրաշեն, Սարամեջ, Լեռնանցք, Սպիտակ, Ղուրսալի, Լեռնապատ, Հալավար, Դարպաս, Շահումյան, Լերմոնտովո, Անտառաշեն, Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքների վարչական տարածքների հողերին և ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտնի անտառտնտեսության հողերին, իսկ արևմուտքում սահմանակցում է ՀՀ Շիրակի մարզի Ջաջուռ համայնքի վարչական տարածքի և Գյումրիի անտառտնտեսության հողերին:

Անտառտնտեսության կազմում ընդգրկված են 7 անտառպետություններ: Ամենփոքր մակերեսը Խնձորուտի անտառետությանն է, որը կազմում է ընդհանուր մակերեսի 8,3%-ը, ամենամեծը՝ Եղեգնուտի անտառպետությանը՝ 20,3%-ը, անտառպետությունների միջին մակերեսը 4600,0հա է: Անտառտնտեսության ընդհանուր տարածքը 2008 թվականի համեմատությամբ ավելացել է 1981հա-ով:

Անտառտնտեսության կառուցվածքը

№	Անտառպետության անվանում	Անտառշինության տարին			Տարբերություն 2008-ի
		1992	2008	2020	

		Մակերեսը	%	Մակերեսը	%	Մակերեսը	%	համեմատ
1	Վանաձորի	5273,0	21,8	5029,0	16,6	5268,0	16,4	239
2	Խնձորուտի	-	0	2559,0	8,4	2675,0	8,3	116
3	Մարգահովիտի	5745,0	23,8	4061,0	13,4	4134,0	12,8	73
4	Սպիտակի	-	0	4497,0	14,9	5165,0	16,0	668
5	Վահագնի	4210	17,5	4724,0	15,7	4739,0	14,7	15
6	Եղեգնուտի	5698	23,6	5942,0	19,7	6510,0	20,3	568
7	Փամբակի	3220	13,3	3409,0	11,3	3711,0	11,5	302
Ընդամենը		**24146,0**	**100**	**30221,0**	**100**	**32202,0**	**100**	**1981,0**

Վանաձորի անտառտնտեսության անտառները գտնվում են Հայաստանի հյուսիս-արևելյան անտառաճման և անտառտնտեսական շրջանում, Փոքր Կովկաս լեռնահամակարգի Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, որի ամենաբարձր լեռնագագաթը Թեժ լեռն է (3101մ):

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 800-2500մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 1200մ բարձրության վրա գտնվում է անտառների ընդհանուր տարածքի ընդամենը 4,7%-ը, 1201-1800մ բարձրությունների վրա՝ 55,2%-ը, իսկ 1800մ-ից բարձր 40,1%-ը:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն անկախ կողմնադրություններից, գերակշռող են 26-30° թեքության լանջերը:

Անտառտնտեսության տարածքում հանդիպում են լեռնային դարչնագույն, լեռնային գորշ անտառային և լեռնային մարգագետնային հողերի տիպերը:

Հյուսիսային կողմնադրության լանջերին ձևավորված լեռնային մուգ շագանակավուն հողերը բավականաչափ հզոր են, իսկ հարավային կողմնադրության լանջերում գերիշխում են բաց գորշավուն հողերը, որոնք բնորոշ են կաղնու և կաղնուտ-բոխուտային տարբեր տիպի ծառուտներին: Լեռնային (անտառային) դարչնագույն հողերը հանդիպում են մինչև 1700մ բարձրությունների վրա, որոնցում զարգացած են բոխու, կաղնու, թխկու անտառային զանգվածները, անտառային գորշ հողերը հիմնականում հանդիպում են 1400-2000մ բարձրության՝ չափավոր տաք և խոնավ կլիմայի, լվացվող ջրային ռեժիմի և բոխու, կաղնու, հաճարենու ծառատեսակների ծածկոցի պայմաններում, իսկ լեռնամարգագետնային հողերը հիմնականում զբաղեցնում են 2000մ և բարձր տարածքները:

Վանաձորի անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ:

Անտառածածկ մակերեսի 69%-ը տեղաբաշխված է հյուսիսային դիրքադրության, իսկ 31%-ը հարավային դիրքադրության լանջերին:

Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են արևելյան հաճարին, արևելյան կաղնին, կովկասյան բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են լորենին, հացին, կեչին, սրատերև թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր փոքր ծառուտներ:

Վանաձորի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառները առանձնացվել են ըստ Ազգային ուղեցույցում (2016) բերված մեթոդաբանության:

Կենդանական աշխարհը ներկայացված է Կովկասյան լայնատերև անտառներին բնորոշ տեսակներով:

Վանաձորի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից:

Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը մեծամասամբ պատկանում է Դեբետ գետի ավազանին, որը զբաղեցնում է 4080կմ² տարածք, որից 3790կմ² Հայաստանի տարածքում: Հարավ-արևելյան հատվածը՝ տարածքի մոտ 1,5%-ը պատկանում է Աղստևի ավազանին: Ուսումնասիրվող տարածքի գետերի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանց սնումը խառն է, որը կատարվում է անձրևաջրերի, ձնհալքի և մասամբ ստորերկրյա ջրերի հաշվին: Տարածաշրջանի գետերը ջրային տրանսպորտի համար պիտանի չեն:

Վանաձորի անտառտնտեսության անտառմշակույթների ընդհանուր մակերեսը 01.01.2020թ. դրությամբ կազմել է 1763,3հա, իսկ չմիայցված սաղարթով անտառմշակույթները՝ 383,6հա: Անտառտնտեսությունում մինչև 20° թեքության հատված, հրդեհված և չվերականգնված տարածքները և անտառային բացատների տարածքները զբաղեցնում են 3551,3հա, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները: 30°-ից բարձր թեքությունների վրա նշված տարածքները զբաղեցնում են 481,4 հա և թողնվել են բնական վերականգնման տակ:

Անտառտնտեսություններում անտառաճման պայմանները բարենպաստ են թարմ չափավոր խոնավությամբ համեմատաբար բերրի հողերում աճող անտառային տեսակների համար: :

Կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը անընդհատ իջնում է, հատկապես կտրուկ նվազումն արձանագրվել է 1992-2008թթ՝ 20 տարի, ինչը վկայում է իրականացված չհամակարգված մեծածվալ հատումների մասին: Չհամակարգված հատումների հետևանքով վերը նշված ժամանակաշրջանում լուրջ փոփոխությունների է ենթարկվել ծառուտի միջին կազմը:

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսի 2008-ի համեմատությամբ 2020թ. ավելացումը 1981 հեկտարով, իսկ անտառածածկի մակերեսը 702,7 հեկտարով բացատրվում է անտառտնտեսության շրջակա համայնքների հետ սահմանների և անտառշինական ու համայնքների կադաստրային քարտեզագրական նյութերում առկա անհամապատասխանությունների ճշտման հետ:

Միջին բոնիտետային դասը անտառների IV-0 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետային դասը III-3 է, սոճին III-6, սերմնային բոխու և հացենու գերակշռությամբ ծառուտները՝ III-5 և III-7, բարձրաբուն կաղնուտներինը՝ IV-8:

Անտառտնտեսության ծառուտների միջին լրիվությունը 0,51 է, ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 5357,3հա մակերես, միջին լրիվության (0,5-0,6) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 12074,2հա մակերես, իսկ բարձր լրիվության (0,7 և բարձր) ծառուտները զբաղեցնում են ընդամենը 3589,0 հա մակերես:

Անտառտնտեսության տարածքից հայտնի է բնապահպանական նշանակություն ունեցող միջատների 56 տեսակ, այդ թվում ՀՀ Կարմիր գրքում գրանցված 14 տեսակ (բզեզների՝ 4, թիթեռների՝ 9 և թաղանթաթրերի 1 տեսակ), որոնցից 3-ը գրանցված են նաև Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում, և 5-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Այստեղ հանդիպում են նաև Հայաստանի 4 (բզեզներ), Անդրկովկասի՝ 9 (բզեզներ՝ 6 և թիթեռների 3 տեսակ ու ենթատեսակ) և Կովկասի՝ 29 (համապատասխանամբար 21 և 8) էնդեմիկներ:

Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը: Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները, ինչպես նաև բուսական էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը:

2020-29 թվականների համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ՝ ընդհանուր 3900,4 հեկտարի վրա, նույն թվում անտառային բացատներում և ազատ

տարածքներում (պարապուտ)՝ 2845,7հա, հատված և չվերականգնված տարածքներում, ինչպես նաև անթրոպոգեն նոսրուտներում ընդհանուր 1054,7հա:

Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է բնական բերականգնման միջոցառումներ ընդամենը 102,6հա վրա, հարթաների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով, իսկ միայն հանքայնացում 2000 հեկտարի վրա:

Համաձայն անտառկառավարման պլանների մշակման հրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որտեղ, անտառագիտական հասկացողությամբ խնամք է պահանջվում:

Ծառուտի տարիքից, լրիվությունից և ընդհանուր վիճակից կախված՝ նախագծվել են խնամքի հատումներ՝ հատման կրկնման հետևյալ հաճախականությամբ.

1. լուսավորման - մաքրման – հատման կրկնման հաճախականությունը 5 տարի,
2. նոսրացման – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի,
3. անցումային – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի:

2020-2029 թվականների համար խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 1899,2հա անտառային հատվածներում՝ լուսավորման հատումներ նախատեսվել են ընդհանուր 59,8 հեկտարի վրա, նոսրացման հատումները 1650,7 հեկտարի վրա, իսկ անցումային հատումներ ընդհանուր 188,7 հեկտարի վրա:

Սանիտարական հատումները կատարվում են անտառների սանիտարական վիճակի բարելավման, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների բացասական ազդեցության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացող ծառերի հեռացման նպատակով: Ընտրովի սանիտարական հատումներն իրականացնելիս հատվում են նշված պատճառներով կենսունակությունը կորցրած առանձին ծառեր, ընդ որում վերջինի դեպքում չպետք է խախտվեն ծառուտի կենսունակությունը, կառուցվածքը, արտադրողականությունը, նպատակային ֆունկցիաները և հատումից հետո ծառուտի լրիվությունը չպետք է փոքր լինի 0,5-ից: Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով՝ ընդհանուր 659,3 հեկտարի վրա նշանակվել են ընտրովի սանիտարական հատումներ 11312 խտ.մ^3 պաշարով:

Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Ըստ հատման տեսակների՝ խնամքի հատումները կազմում են հատումներ նախատեսած մակերեսի 70,8%-ը և հատման նախատեսած պաշարի 65,7%-ը, սանիտարական հատումները 24,6% և 30,4%, այլ հատումները 4,6% և 3,9% :

Հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- անտառսերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- անտառային մշակույթների հիմնում,
- ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- բնական վերաճին օժանդակող համալիր միջոցառումներ,
- խնամքի հատումների իրականացում,
- անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում,
- ընտրովի սանիտարական հատումներ:

Անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով I հասակային դասի 1հա-ի միջին աճը ասեղնատերևավոր ծառատեսակների համար 2,0մ^3 է, իսկ տերևավոր տեսակների մոտ 1,30մ^3: Բնական վերաճին օժանդակող միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը կկազմի 10102,6x0,2մ^3)հա (պայմանականորեն) = 2020,5մ^3: Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի 7687,3մ^3:

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար,
- բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը:
- ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում,
- համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում ընդհանուր 25կմ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսությունը» գտնվում է Լոռու մարզի նախկին Ստեփանավանի վարչական շրջանում: Մասնաճյուղի կազմում ընդգրկված են երկու՝ Ստեփանավանի 6009,0հա և Գյուլագարակի՝ 2864,0հա մակերեսով անտառպետությունները: Ստեփանավանի անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 8873,0հա:

ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

		1992 թ.		2008 թ.		2020 թ.	
		Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%
1	Լալվարի	2293,0	24.6	-	-	-	
2	Ստեփանավանի	4341,0	46.8	4121,3	61.8	6009,0	67,7
3	Գյուլագարակի	2659,0	28.6	2543,7	38.2	2864,0	32,3

Ընդամենը	9293,0	100	6665,0	100	8873,0	100

Ստեփանավանի անտառտնտեսության անտառները գտնվում են Փոքր Կովկասյան լեռնաշղթայի կենտրոնական հատվածի արևելանդրկովկասյան անտառաճման գոտում և, հիմնականում, տեղաբաշխված են Բազումի լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկների ու լանջերի վրա, որոնք աստիճանաբար ցածրանալով ձուլվում են Գարգառի և Կուրթանի բարձրադիր գոգահովիտներին: Ոչ մեծ անտառային զանգվածներ հանդիպում են նաև Լեջան լեռնազանգվածի հարավային լեռնալանջերում՝ հիմնականում անտառմշակույթների տեսքով:

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 800-2200մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 1200մ բարձրության վրա գտնվում է անտառների ընդհանուր տարածքի ընդամենը 2,3%-ը (195,5հա), 1201-1800մ բարձրությունների վրա՝ 76,5%-ը (5292,1հա), իսկ 1800մ-ից բարձր 21,2%-ը (1469,0հա): Անտառպետություններում հետևյալ հարաբերակցությունն է՝ Ստեփանավանի անտառպետությունում համապատասխանաբար՝ 2,4%, 75,9%, 21,7%, իսկ Գյուլագարակի անտառպետությունում՝ 3,7%, 76,0% և 20,3%: Անտառածածկ մակերեսի 69%-ը տեղաբաշխված է հյուսիսային դիրքադրության, իսկ 31%-ը հարավային դիրքադրության լանջերին: Ստեփանավանի անտառտնտեսության տարածքը ըստ անտառաճման պայմանների մտնում է Լոռվա սարահարթի չափավոր խոնավ շրջանի մեջ, ընդգրկում է սարահարթի մեջ մտնող Ձորագետի աջափնյակը, ինչպես նաև նախկին Ստեփանավանի շրջանի լեռնային հատվածը:

Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են արևելյան հաճարին, արևելյան կաղնին, կովկասյան բոխին, կովկասյան սոճին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են լորենին, հացին, կեչին, սրատերև թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր ոչ մեծ ծառուտներ:

Ստեփանավանի անտառտնտեսության տարածքում ամենամեծ գետը Ձորագետն է՝ Դեբեդի վտակը, որի վտակներն են՝ Տաշիրը, Հովնաձորը, Ուռուտը և Ձքնաղը: Ձորագետը սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայից և, հոսելով Լոռվա հրաբխային սարավանդով, առաջացնում է մոտ 80-100մ խորության կանիոն: Գետի երկարությունը 67,0կմ է, ավազանը՝ 1461,0կմ^2, տարեկան հոսքը մոտ 531,0միլ.մ^3, ջրի ծախսը մոտ 43,0մ^3, հոսքի գործակիցը՝ 0,48: Գետի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սնումը խառն է, կատարվում է անձրևաջրերի, ձնհալքի և ստորերկրյա ջրերի հաշվին, ընդ որում 53%-ը ձնհալից և անձրևաջրերից, 47%-ը ստորգետնյա ջրերից:

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսի 2008-ի համեմատությամբ 2020թ. ավելացումը 2208,0հա-ով, իսկ անտառածածկի մակերեսը 1243,0հա-ով բացատրվում է անտառտնտեսության շրջակա համայնքների հետ սահմանների և անտառշինական ու համայնքների կադաստրային քարտեզագրական նյութերում առկա անհամապատասխանությունների ճշտման, վերջին տարիներին բնական վերականգնման հետևանքով անտառապատված տարածքների ներառմամբ, ինչպես նաև երկրատեղեկատվական համակարգով մակերեսների ճշտման հանգամանքներով:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են արևելյան հաճարին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 1547,2հա՝ 224300մ^3 ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 22,4%-ը և ընդհանուր պաշարի 31,9%-ը, ընդ որում 2008թ. համեմատությամբ մակերեսը նվազել է 410,1 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 124300խմ-ով, բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 2698,9հա, ընդհանուր պաշարը 207920մ^3 (անտառածածկի 39,0%-ը և պաշարի 29,5%-ը), 2008թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը ավելացել է 1070,6հեկտարով, ընդհանուր պաշարը 26730 խմ-ով, կաղնուտները՝ 850,3հա, 63450խմ (անտառածածկ տարածքի 12,3%-ը և պաշարի 9,0%-ը),

սոճուտները՝ 1272,2հա, 186080մ³ պաշարով (18,4% և 26,4%) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 7,9%-ը և ընդհանուր պաշարի 3,2%-ը:

Անտառտնտեսության ծառուտների միջին լրիվությունը 0,55 է, ընդ որում հիմնական անտառկազմող բարձրաբուն կաղնուտներում և հաճարկուտներում 0,53 և 0,54: Ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 1552,7հա մակերես, կամ ընդհանուր մակերեսի 22,34%-ը: 2008թ. գույքագրման արդյունքներով կազմել 814,5հա (14,3%): Միջին լրիվության (0,5-0,6) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 4034,9հա մակերես՝ 58,0%-ը, 2008թ. 4029,8հա (71%): Բարձր լրիվության (0,7 և բարձր) ծառուտները կազմում են ընդհանուր անտառածածկի 18,6%-ը, 2008թ՝ 14,6%:

Անտառների միջին բոնիտետային դասը III-4 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետային դասը III-3 է, սոճին II-5, սերմնային բոխու և հացենու գերակշռությամբ ծառուտները՝ III-5 և III-2, բարձրաբուն կաղնուտներինը՝ IV-1:

Անտառտնտեսություններում անտառաճման պայմանները բարենպաստ են թարմ չափավոր խոնավությամբ համեմատաբար բերրի հողերում աճող անտառային տեսակների համար, որը և հաշվի է առնվել անտառվերականգնման համալիր միջոցառումների նախատեսման ժամանակ:

Անտառտնտեսության 2008թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 71, իսկ 2020թ. 64, ինչը վկայում է իրականացված չհամակարգված հատումների մասին: Անտառտնտեսության ընդհանուր մակերեսի 2008 թվականի համեմատությամբ 2020թ. ավելացումը 2208,0հա-ով բացատրվում է շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման, նույն թվում նաև անտառտնտեսության գործող սահմաններից դուրս սոճու սերմնային վերականգնված տարածքների միացման հանգամանքով: Նշված ժամանակաշրջանում անտառածածկ մակերեսն ավելացել է ընդհանուր 1243,0հա-ով, իսկ ընդհանուր պաշարը ավելացման փոխարեն, ընդհակառակը նվազել է 23640,0մ³-ով, ինչը ևս վկայում է իրականացված ծավալուն հատումների մասին:

Անտառտնտեսության 2008թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 71, իսկ 2020թ. 64, ինչը վկայում է իրականացված չհամակարգված հատումների մասին:

Անտառների միջին բոնիտետային դասը III-4 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետային դասը III-3 է, սոճին II-5, սերմնային բոխու և հացենու գերակշռությամբ ծառուտները՝ III-5 և III-2, բարձրաբուն կաղնուտներինը՝ IV-1:

Իրականացված չհամակարգված հատումների հետևանքով փոփոխությունների է ենթարկվել ծառուտի միջին կազմը՝ որոշակի նվազել է բարձրարժեք հաճարի և սոճի տեսակների մասնակցությունը ծառուտի միջին կազմում:

Չհամակարգված հատումների հետևանքով հատված կամ նոսրուտների վերածված տարածքներում, բնական սերմնային վերականգնման և սերմնային վերաճին օժանդակման ճանապարհով, երիտասարդ տարիքի ծառուտների մակերեսը ավելացել է 452,7հա-ով:

Անտառտնտեսությունում հասուն և գերհասուն ծառուտները զբաղեցնում են ընդամենը 63,4հա մակերես:

Անտառային հողերին պատկանում են՝ անտառածածկ հողերը, ոչ անտառածածկ հողերը չմիակցված սաղարթով անտառմշակույթները անտառային տնկարանները և պլանտացիաները:

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 60,6%-ը (5373,9հա), այդ թվում անտառային հողերը՝ 5072,5հա, որից անտառածածկը՝ 3910,3հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 1025,2հա: Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 6917,9հա է (78,0%), որից ընդհանուր 1337,1հա է միակցված սաղարթով անտառմշակույթ (37,6%), հրդեհված, համատարած հատված և չվերականգնված մակերեսը՝ 248,7հա, անտառային բացատները և պարապուտները՝ 1083,1հա, նոսրուտները՝ 266,7հա:

«Ստեփանավանի» անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերին 62 ընտանիքին 142 ցեղին պատկանող 389 տեսակ:

Տարածքում աճող բույսերից 6 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի անտառներում անտառվերականգնման հատումների իրականացման կարգը (ՀՀ կառավարության 07 սեպտեմբերի 2006թ. N:1412-Ն որոշում), հաշվի առնելով, որ անտառտնտեսությունում բացակայում են արտադրական նշանակության կատեգորիայի հասուն տարիքային խմբի ծառուտները, անտառվերականգնման հատումներ չեն նախատեսվել:

Ծառուտի տարիքից, լրիվությունից և ընդհանուր վիճակից կախված՝ նախագծվել են խնամքի հատումներ՝ հատման կրկնման հետևյալ հաճախականությամբ.

1. լուսավորման - մաքրման – հատման կրկնման հաճախականությունը 5 տարի,
2. նոսրացման – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի,
3. անցումային – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի:

2021-2030 թվականների համար խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 554,1հա անտառածածկ հատվածներում ընդհանուր պաշարը 68878,0մ³, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 10259,0մ³, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 7997,0մ³, որից շինափայտի պաշարը 3352,0մ³, վառելափայտը 4645,0մ³:

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 222,1 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 14336մ³, հատման նախատեսած պաշարը 2114խտմ³, այդ թվում իրացման ենթակա պաշարը 1666մ³, որից շինափայտի պաշարը 87մ³, իսկ վառելափայտը 1579մ³:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 225,2 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 50510մ³, հատման նախատեսած պաշարը 7502խտ մ³, այդ թվում իրացման ենթակա պաշարը 6012մ³, որից շինափայտի պաշարը 3265մ³, իսկ վառելափայտը 2747մ³:

Ստեփանավանի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 565,0հա-ի վրա կազմում է 10539խտ մ³:

Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները: Բուսական էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը:

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

2021-30թթ. ժամանակաշրջանի անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Բնական վերաճին օժանդակող միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը կկազմի (3506,9x0,2մ³)հա (պայմանականորեն) = 701,38մ³:

Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի 1568,86մ³:

Կառավարման պլանի նախագծում նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում, անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում:

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերաճին օժանդակող միջոցառումների հաշվին:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում: Հիմնական անտառկազմող ծառատեսակների որակական կազմը զգալիորեն փոխվել է ի հաշիվ ոչ անտառածածկ տարածքների և ցածր արտադրողականության ու լրիվության (0,3-0,4) ծառուտների անտառապատման և անտառվերականգնման միջոցառումների:

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար՝ ներկայացված է թիվ 9 անտառվերականգնման միջոցառումներ բաժնում:
- բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը:
- ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:
- համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում ընդհանուր 25կմ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսությունը» գտնվում է Լոռու մարզի նախկին Կալինինոյի վարչական շրջանում: Անտառտնտեսությունը հյուսիսից սահմանակցում է

Վրաստանի հանրապետությանը, հարավից Ստեփանավանի, արևելքից Ջիլիզայի անտառտնտեսություններին, արևմուտքից Շիրակի մարզին: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 25,0կմ է, իսկ արևելքից արևմուտք՝ 39,0կմ:

Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման, ինչպես նաև արբանեակային պատկերների վերծանման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղի գործող սահմանները:

ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

№	Անտառպետության անվանումը	1992 թ.		2008 թ.		2020 թ.	
		Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%
1	Լալվարի	-	-	2288	33.3	2754	32,4
2	Տաշիրի	1471	30.3	2263	33.0	2552	30,0
3	Մեծավանի	1696	35.0	2309	33.7	3195	37,6
4	Սարչապետի	1683	34.7	-	-	-	-
	Ընդամենը	4850	100	6860	100	8501	100

Տաշիրի անտառտնտեսության անտառները գտնվում են Փոքր Կովկասյան լեռնաշղթայի կենտրոնական հատվածի արևելաանդրկովկասյան անտառաճման գոտում: Հիմնականում, տեղաբաշխված են Լոռվա սարահարթի վերին մասում, մասամբ՝ Վիրահայոց լեռնաշղթայի հարավային լեռնաբազուկներին:

Անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1100-2200մ բարձրությունների վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն, անկախ կողմնադրություններից, գերակշռող են 25°-ից բարձր թեքության լանջերը:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են արևելյան հաճարին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 1478,3հա՝ 296280,0մ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 28,5%-ը և ընդհանուր պաշարի 47,8%-ը (սահմանային Լալվարի անտառպետություն), ընդ որում 2008թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 213,9 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 31960մ³-ով:

Երիտասարդ ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 1727,1հա, 77760մ³ պաշարով (անտառածածկի 33,3% և պաշարի 12,5%-ը: Անտառտնտեսությունում 2008թ. ծառուտների միջին լրիվությունը եղել է 0,55:

Միջին տարիքի ծառուտները, որոնք բացարձակ գերակշռում են, զբաղեցնում են 3024,9հա, 470560մ³ պաշարով (համապատասխանաբար 58,4% և 76,0%):

Անտառների միջին բոնիտետային դասը III-6 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետային դասը III-2 է, բոխին՝ III-3 սոճին՝ III-6, բարձրաբուն կաղնուտներինը՝ IV-1:

Տարածաշրջանի կլիման նպաստում է անտառտնտեսության տարածքում անտառի թարմ(չափավոր խոնավ) տիպերի գերակշռությանը (տարախոտային), որը զբաղեցնում է ընդհանուր անտառածածկի 67,6%-ը (3505,4հա):

Անտառտնտեսության 2008թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 55, իսկ 2020թ. 69, 1 հեկտարի միջին պաշար՝ 2008թ. 96մ^3, 2020թ. 121մ^3, միջին լրվությունը համապատասխանաբար 0,55 և 0,54, ինչը վկայում է, որ անտառտնտեսության անտառներում խիստ ընդգծված չհամակարգված հատումներ չեն իրականացվել:

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսի 2008թ. համեմատությամբ 2020թ. ավելացումը 1641,0հա-ով բացատրվում է շրջակա բնակավայրերի կադաստրային և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման, հիմնականում անտառային բացատների և պարապուտ տարածքների ավելացմամբ, ինչպես նաև Ջիլիզայի անտառտնտեսության Ախքյորփու անտառպետության 2-րդ և 3-րդ քառակուսիների՝ Լալվարի անտառպետությանն անցնելու և Ստեփանավանի անտառտնտեսության Ստեփանավանի անտառպետության 1-ին քառակուսին Տաշիրի անտառպտետությանն անցնելու հանգամանքներով:

Նշված ժամանակաշրջանում անտառածածկ մակերեսը ավելացել է 77,7հա-ով, հիմնականում բնական վերականգնված սոճու, իսկ ընդհանուր պաշարը ավելացել 127110^3-ով, նույն թվում սոճին 54320մ^3, հաճարի և բոխու գերակշռությամբ ծառուտները համապատասխանաբար՝ 31960 և 31220մ^3-ով:

Անտառայն մշակույթների մակերեսի նվազումը 525,1հա-ով բացատրվում է ինչպես առանձին տարածքներում հիմնված անտառմշակույթների անբավարար պահպանության և խնամքի աշխատանքների հետևանքով ոչնչացման, ինչպես նաև նախորդ տասնամյակերում Լալվարի անտառպետության առանձին հատվածներում սաղարթի տակ անտառմշակույթների հիմնման և ոչ հիմնավոր անտառածածկ փոխադրման հանգամանքով:

Անտառտնտեսության 2008թ. գնահատման արդյունքներուվ հեևյալ պատկերն է՝ երիտասարդ ծառուտները զբաղեցրել են անտառածածկի 47,6%-ը և պաշարի 18,6%-ը, իսկ միջին տարիքի ծառուտները համապատասխանաբար 48% և 73,6%-ը:

Հասունացող և հասուն ծառուտները զբաղեցնում են համապատասխանաբար 372,8հա (7,3%) և 57,5հա (1,1%), 62610մ^3 (10,2%) և 8960մ^3 (1,4%): 2008թ. հասունացող և հասուն ծառուտները միասին՝ 4,3% և 7,8%:

Երիտասարդ տարիքային խմբի ծառուտների ընդհանուր մակերեսի նվազումը բացատրվում է հետևյալով՝ վերջին 10-15 տարիներին անտառային բացատներում և անտառածածկին հարակից պարապուտ տարածքներում մոտ 300,0հա վրա տեղի է ունեցել բնական վերականգնում հիմնականում սոճի տեսակով, կլիմայի փոփոխության հետևանքով անտառաճման պայմանների վատացման պայմաններում համապատասխան խնամքի միջոցառումներ չիրականացնելու, ինչպես նաև հիվանդություններից և վնասատուներից սոճու զգալի տարածքների չորացման և անտառածածկից դուս գալու պատճառով և մի շարք այլ հանգամանքներց:

Անտառտնտեսության տարածքում հանդիպում են լեռնային դարչնագույն, լեռնային գորշ անտառային և լեռնային մարգագետնային հողերի տիպերը:

Տաշիրի անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 33 ընտանիքի և 74 ցեղին պատկանող 252 տեսակներ:

«Տաշիրի» անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 5 տեսակ ընդգրկված է Հայաստանի Կարմիր գրքում: Անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից:

Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Դեբեդ գետի ավազանին: Տաշիրի անտառտնտեսության տարածքում քիչ չեն փոքր ու միջին գետակները: Անտառտնտեսության տարածքում և հարակից շրջաններում հանդիպում են ոչ մեծ լճակներ և ճահճուտներ: Տարածքի ամենախոշոր գետը Տաշիրն է՝ սնումը ձնանձրևային, հորդանում է գարնանը:

Տաշիրի անտառտնտեսության հողերին պատկանում են՝ անտառածածկ հողերը, ոչ անտառածածկ հողերը, չմիակցված սաղարթով անտառմշակույթները, անտառային տնկարանները և պլանտացիաները:

Արտադրական նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 566,0հա (6,7%)՝ ամբողջությամբ անտառածածկ, որից անտառմշակույթները՝ 39,5հա կամ 7%:

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 69,4%-ը (5902,3հա), այդ թվում անտառածածկը՝ 2998,1հա է (50,6%), նույն թվում անտառմշակույթները՝ 2175,6հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ ընդամենը 32,4հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են՝ 259,1հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 2277,4հա, նոսրուտները՝ 56,0հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 267,4հա (ընդհանուր ոչ անտառային հողերի 89,7%-ը):

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 2032,7հա (23,9%), այդ թվում անտառածածկ մակերեսը՝ 1618,8հա, նույն թվում անտառմշակույթները՝ 429,3հա:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 5182,9հա է (61,0%), որից ընդհանուր 2644,4հա է միակցված սաղարթով անտառմշակույթ, հրդեհված, համատարած հատված և չվերականգնված մակերեսը՝ 327,6հա, անտառային բացատները և պարապուտ տարածքները՝ 2579,0հա, նոսրուտները՝ 56,0հա: Ընդհանուր ոչ անտառային մակերեսը զբաղեցնում է 310,1հա:

Համաձայն անտառվերականգնման հատումների իրականացման կարգի, անտառվերականգնման հատումներ նշանակվում են բացառապես արտադրական նշանակության հասուն և գերհասուն անտառներում, որի նպատակն է անտառային պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման, անտառի ջրապահպան, ջրակարգավորիչ և պաշտպանական հատկանիշների ամրապնդման, անտառվերականգնման, տնտեսապես արժեքավոր ծառատեսակների վերարտադրության, անտառի արտադրողականության բարձրացման, բնական միջավայրի բարելավման ու պահպանման բարելավումը, ինչպես նաև հասուն և գերհասուն տարիքի ծառերի փոխարինումը երիտասարդ, բարձրարժեք ծառատեսակներով:

Հիմք ընդունելով Հայաստանի անտառներում անտառվերականգնման հատումների իրականացման կարգը (ՀՀ կառավարության 07 սեպտեմբերի 2006թ. N:1412-Ն որոշում), անտառտնտեսության անտառներում անտառվերականգնման հատումներ չեն նախատեսվել:

Կառավարման պլանով 2008թ. անտառտնտեսությունում նախատեսված են եղել ընդհանուր 559,9հա-ի վրա խնամքի հատումներ, 9981խտմ^3 հատման նախատեսված պաշարով, նույն թվում՝ լուսավորման և մաքրման 20,2հա, 60խտմ^3 հատման նախատեսված պաշարով, նոսրացման հատումներ՝ 205,4հա, 3206խտմ^3 պաշարով և անցումային հատումներ՝ 334,3հա, 6625խտմ^3 պաշարով:

Ծառուտի տարիքից, լրիվությունից և ընդհանուր վիճակից կախված՝ նախագծվել են խնամքի հատումներ՝ հատման կրկնման հետևյալ հաճախականությամբ.

1. լուսավորման - մաքրման – հատման կրկնման հաճախականությունը 5 տարի,
2. նոսրացման – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի,
3. անցումային – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի:

02543163 ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ZAKLJUČNIE ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

2021-2030 թվականների համար խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 519,1հա անտառածածկ հատվածներում, ընդհանուր պաշարը 85080մ³, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 10730մ³, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 8790մ³, որից շինափայտի պաշարը 3707մ³, վառելափայտը 5083մ³:

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 93,7 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 11470մ³, հատման նախատեսած պաշարը 1428խտ.մ³, այդ թվում իրացման ենթակա պաշարը 1141մ³, որից շինափայտի պաշարը 420մ³, իսկ վառելափայտը 721մ³:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 425,4հա-ի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 73610մ³, հատման նախատեսած պաշարը 9302խտ.մ³, այդ թվում իրացման ենթակա պաշարը 7649մ³, որից շինափայտի պաշարը 3287մ³, իսկ վառելափայտը 4362մ³:

ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը սահմանում են անտառապաշտպանական միջոցառումների իրավական ասպեկտները և իրականացման կարգը, համաձայն որոնց անտառապաշտպանական միջոցառումները ներառում է անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ, անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելում և սանիտարական հատումներ:

Տաշիրի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 558,4հա-ի վրա կազմում է 12080,0խտ.մ³, այդ թվում իրացման ենթակա անտառանյութի պաշարը 10140,0մ³ է, որից շինափայտը՝ 3877,0մ³:

2021-30 թվականների համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ՝ ընդհանուր 1609,8հա վրա, նույն թվում անտառային բացատներում և ազատ տարածքներում (պարապուտ)՝ 1157,2հա, հատված և չվերականգնված տարածքներում, ինչպես նաև անթրոպոգեն նոսրուտներում ընդհանուր 213,4հա:

Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է բնական վերականգնման միջոցառումներ ընդհանուր 222,8հա վրա, հարթաների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքով:

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 35000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 2900,0հա անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

2021-30թթ. ժամանակաշրջանի անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով I հասակային դասի 1հա-ի միջին աճը ասեղնատերևավոր ծառատեսակների համար 2,0մ³ է, իսկ տերևավոր տեսակների մոտ 1,30մ³:

Բնական վերաճին օժանդակող միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը կկազմի (3122,6x0,2մ³)հա (պայմանականորեն) = 624,52 մ³:

Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի 2857,02մ³: Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում:

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության,
- բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը,
- ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում,
- համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ջիլիզայի անտառտնտեսությունը» գտնվում է Լոռու մարզի նախկին Թումանյանի վարչական շրջանում: Անտառտնտեսությունը հյուսիսից սահմանակցում է Վրաստանի հանրապետությանը, հարավից և հարավ-արևելքից Թումանյանի և արևմուտքից Տաշիրի անտառպետություններին: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 16,0կմ է, իսկ արևելքից արևմուտք՝ 26,0կմ:

Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման, ինչպես նաև արբանակային պատկերների վերծանման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով «Ջիլիզայի անտառտնտեսություն» մասնաճյուղի ներկայիս սահմանները:

Անտառտնտեսության կառուցվածքը

№	Անտառպետության անվանումը	1989 թ.		2008 թ.		2020 թ.	
		Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%
1	Ախքյորփի	4225	38,8	4349	28,4	4073	20,9
2	Խոժոռնի	3725	34,2	3691	24,1	3685	18,9
3	Բերդաձորի	3934	27,0	2935	19,2	2925	15,0

4	Ճոճկանի	-	-	4318	28,2	4380	22,5
5	Շամլուղի	-	-	-	-	4391	22,7
Ընդամենը		**10884**	**100**	**15293**	**100**	**19454**	**100**

Ջիլիզայի անտառտնտեսության անտառները գտնվում են Փոքր Կովկաս լեռնաշղթայի կենտրոնական հատվածի արևելաանդրկովկասյան անտառաճման գոտում: Հիմնականում, տեղաբաշխված են Վիրահայոց լեռնաշղթայի լեռնաբազուկներին: Ամենաբարձր կետը Լալվարն է՝ 2543մ:

Անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 600-2100մ բարձրությունների վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն, անկախ կողմնադրություններից, գերակշռող են 25° -ից բարձր թեքության լանջերը:

Անտառտնտեսության տարածքում ֆլորայի կազմը պայմանավարված է հիմնականում աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից եղած բարձրությամբ և ներկայացված է Թումանյանի ֆլորիստական շրջանում, որում հմնական բուսական տեսակը անտառայինն է: Կենդանական աշխարհը ներկայացված է Կովկասյան լայնատերև անտառներին բնորոշ տեսակներով: Տարածքի կենդանական աշխարհի բազմազանությանն ու հարստությանը նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը:

Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Դեբեդ և Խրամ գետերի ավազանին, ընդ որում Դեբեդը հանդիսանում է անտառտնտեսության հարավային սահմանը: Ինչպես բոլոր լեռնային երկրներում, այստեղ ևս ջրագրական ցանցը զարգացած է, սակայն բնութագրվում է խիստ անհամաչափ բաշխվածությամբ և արտահայտված սեզոնայնությամբ: Տարածքի գետերի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանց սնումը խառն է, որը կատարվում է անձրևաջրերի, ձնհալքի և ստորերկրյա ջրերի հաշվին:

Անտառային հողերին պատկանում են՝ անտառածածկ հողերը, ոչ անտառածածկ հողերը, չմիակցված սաղարթով անտառմշակույթները, անտառային տնկարանները և պլանտացիաները:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են արևելյան հաճարին, որի գերակշռորթլամբ ծառուտները զբաղեցնում են 6930,3հա՝ 1128740,0մ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 39,8%-ը և ընդհանուր պաշարի 51,8%-ը, ընդ որում 2008թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 556,7հա-ով, իսկ ընդհանուր պաշարը նվազել է 45830մ³-ով:

Անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է ըստ տարիքային խմբերի: Երիտասարդ ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 530,8հա, 30810մ³ պաշարով (անտառածածկի 3,1 % և պաշարի 1,4%-ը:

Միջին տարիքի ծառուտները, որոնք բացարձակ գերակշռում են, զբաղեցնում են 14064,6հա, 1842270մ³ պաշարով (համապատասխանաբար 80,8% և 84,2%):

Հասունացող և հասուն ծառուտները զբաղեցնում են համապատասխանաբար 1508,4հա (8,7%) և 1304,4հա (7,6%), 197190մ³ (9,0%) և 108920մ³ (5,4%):

Անտառտնտեսության 2008թ. գնահատման արդյունքներով հեևյալ պատկերն է՝ երիտասարդ ծառուտները զբաղեցրել են անտառածածկի 2,4%-ը և պաշարի 0,5%-ը, միջին տարիքի ծառուտները՝ համապատասխանաբար 79,6% և 82,4%, հասունացող և հասուն ծառուտների մակերեսը՝ 11,1% և 6,9%, պաշարը՝ 12,8% և 4,3%:

Անտառների միջին բոնիտետային դասը III-7 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետային դասը III-1 է, բոխին՝ III-3 սոճին՝ I-8, բարձրաբուն կաղնուտներինը՝ IV-1:

Ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 3992,4հա մակերես, կամ ընդհանուր մակերեսի 22,9%-ը: 2008թ. գույքագրման արդյունքներով կազմել 4859,8հա (35,1%): Միջին լրիվության (0,5-0,6) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 10047 հա մակերես՝ 57,7%-ը, 2008թ. 7843,9 հա (56,6%):

Բարձր լրիվության (0,7 և բարձր) ծառուտները կազմում են ընդհանուր անտառածածկի 19,4%-ը, 2008թ՝ 8,3%:

Տարածաշրջանի կլիման նպաստում է անտառտնտեսության տարածքում անտառի թարմ (չափավոր խոնավ) տիպերի գերակշռությանը (տարախոտային), որը զբաղեցնում է ընդհանուր անտառածածկի 69,8%-ը (12145,2հա):

Անտառտնտեսության 2008թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 84 իսկ 2020թ.՝ 86: Փաստորեն կայուն կառավարման պայմաններում 12 տարի ավելանալու փոխարեն ավելացել է ընդամենը 2 տարով: 1,0հա-ի միջին պաշարը՝ 2008թ. 138մ^3, 2020թ. 126մ^3, միջին լրվությունը նշված ժամանակահատվածում միջին լրիվությունը ավելացել է ընդամենը 0,02–ով:

«Ջիլիզայի» անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերին 59 ընտանիքիև 155 ցեղին պատկանող 422 տեսակ:

Անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 5 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Այս տվյալները անհրաժեշտ են «Ջիլիզայի» անտառտնտեսության Տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառների առանձնացման համար: Անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից:

Անտառտնտեսության տարածքում հանդիպում են լեռնային դարչնագույն, լեռնային գորշ անտառային, ճմակարբոնատային և ոչ մեծ տարածքներում գետահովտային բերվածքային (ալուվիալ) հողերի տիպերը:

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 62,1%-ը (12082հա), այդ թվում անտառածածկը՝ 10319,9հա է (85,4%), որից անտառմշակույթները՝ 125,7հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ ընդամենը 4,7հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են՝ 152,3հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 285,1հա, նոսրուտները՝ 822,4հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 442,5հա:

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 4065,5հա (20,9%), այդ թվում անտառածածկ մակերեսը՝ 3784,7հա, որից անտառմշակույթները՝ 139,8հա: Հրդեհված, հատված և չվերականգնված անտառային տարածքները զբաղեցնում են 99,2հա, անտառային բացատները և պարապուտ տարածքները՝ 111,8հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 23,0հա:

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 3306,5հա՝ ամբողջությամբ անտառածածկ:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 17408,2հա է, ոչ անտառային հողերի մակերեսը զբաղեցնում է 465,5հա:

2020թ անտառտնտեսության մակերեսի ավելացումը 2008-ի համեմատությամբ 4161,0 հեկտարով (որից 4022,3հա-ը անտառային հողեր) բացատրվում է համայնքների վարչական սահմաններում անտառային հողատեսքերի, նախկինում անտառային հողերի ընդգրկման, մակերեսները երկրատեղեկատվական համակարգով ճշտման և Էալվարի

անտառտնտեսության Շամլուղի անտառպետության Ջիլիզայի անտառտնտեսության կազմում ընդգրկելու հանգամանքներով:

Համաձայն անտառվերականգնման հատումների իրականացման կարգի, անտառվերականգնման հատումներ նշանակվում են բացառապես արտադրական նշանակության հասուն և գերհասուն անտառներում, որի նպատակն է անտառային պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման, անտառի ջրապահպան, ջրակարգավորիչ և պաշտպանական հատկանիշների ամրապնդման, անտառվերականգնման, տնտեսապես արժեքավոր ծառատեսակների վերարտադրության, անտառի արտադրողականության բարձրացման, բնական միջավայրի բարելավման ու պահպանման բարելավումը, ինչպես նաև հասուն և գերհասուն տարիքի ծառերի փոխարինումը երիտասարդ, բարձրարժեք ծառատեսակներով:

Համաձայն անտառկառավարման պլանների մշակման հրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որտեղ, անտառագիտական հասկացողությամբ, խնամք է պահանջվում, ընդ որում խնամքի հատումները չեն նախատեսվում անտառվերականգնման հատումից մեկ հասակային դաս առաջ:

Ծառուտի տարիքից, լրիվությունից և ընդհանուր վիճակից կախված՝ նախագծվել են խնամքի հատումներ՝ հատման կրկնման հետևյալ հաճախականությամբ.

1. լուսավորման - մաքրման – հատման կրկնման հաճախականությունը 5 տարի,
2. նոսրացման – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի,
3. անցումային – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի:

2021-2030 թվականների համար խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 1166,3հա անտառածածկ հատվածներում, ընդհանուր պաշարը 172453խտ.մ^3, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 22348խտ.մ^3, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 18260խտ.մ^3, որից շինափայտի պաշարը 2878մ^3, վառելափայտը 15505խտմ^3:

ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ.), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը սահմանում են անտառպաշտպանական միջոցառումների իրավական ասպեկտները և իրականացման կարգը, համաձայն որոնց անտառպաշտպանական միջոցառումները ներառում է անտառպաթոլոգիական ուսումնասիրություններ, անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելում և սանիտարական հատումներ: Սանիտարական հատումները կատարվում են անտառների սանիտարական վիճակի բարելավման, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների բացասական ազդեցության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացող ծառերի հեռացման նպատակով: Ընտրովի սանիտարական հատումներն իրականացնելիս հատվում են նշված պատճառներով կենսունակությունը կորցրած առանձին ծառեր, ընդ որում վերջինի դեպքում չպետք է խախտվեն ծառուտի կենսունակությունը, կառուցվածքը, արտադրողականությունը և նպատակային:

Ջիլիզայի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 1658,6հա-ի վրա կազմում է 29688խտ.մ^3: Ըստ հատման տեսակների՝ խնամքի հատումները կազմում են հատումներ նախատեսած մակերեսի 70,3%-ը և հատման նախատեսած պաշարի 74,6%-ը, սանիտարական հատումները համապատասխանաբար 21,6% և 18,9%-ը, իսկ այլ հատումները (առանձին ծառերի հատում) 8,1% և 6,5%:

Անտառկառավարման պլանով նախատեսված են նաև անտառվերականգնման միջոցառումներ 297,1 հեկտարի վրա:

2021-30 թվականների համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ՝ ընդհանուր 297,1հա վրա, նույն թվում անտառային բացատներում և ազատ տարածքներում

(պարապուտ)՝ 62,6հա, հատված և չվերականգնված տարածքներում, ինչպես նաև անթրոպոգեն նոսրուտներում ընդհանուր 78,2հա:

Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է բնական բերականգնման միջոցառումներ ընդամենը 130,6հա վրա, հարթաների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով:

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 15000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 2500,0հա անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը: Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

2021-30թթ. ժամանակաշրջանում նախատեսվում է անտառի հիմնում ոչ անտառածածկ մակերեսում 173,2հա վրա, տարեկան շուրջ 17,0հա:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում: Հիմնական անտառկազմող ծառատեսակների որակական կազմը զգալիորեն փոխվել է ի հաշիվ ոչ անտառածածկ տարածքների և ցածր արտադրողականության ու լրիվության (0,3-0,4) ծառուտների անտառապատման և անտառվերականգնման միջոցառումների:

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար՝ ներկայացված է թիվ 9 անտառվերականգնման միջոցառումներ բաժնում,
- բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը,
- ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում,
- համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում և կառուցում ընդհանուր 27,0կմ:

Ըստ անտառկառավարման պլանի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի, Տաշիրի, Ստեփանավանի, Ջիլիզայի անտառտնտեսությունների» համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- իրականացնել քայքայված անտառների վերականգնման նպատակով նախատեսած տարածքներում անտառվերականգնման համալիր միջոցառումներ,
- անտառային տարածքների գույքագրման և գնահատման արդյունքներով համայնքների կադաստրային քարտեզագրման հետ բացահայտված անհամապատասխանությունները և ճշտված քարտեզները սահմանված կարգով ներկայացնել՝ համապատասխան գերատեսչություններում ամրագրելու նպատակով,
- առանձնակի ուշադրություն դարձնել հակահրդեհային միջոցառումների իրականացմանը, հատկապես նախազգուշական, հրդեհաշիջման համապատասխան գործիք-սարքավորումների ձեռք բերմանը և ջրի ամբարտակների կառուցմանը,
- կայուն անտառկառավարման դեպքում տարիքային 4 խմբերը կունենան մոտավոր հավասար բաշխվածությունն, ինչն էլ երաշխավորում է նորմալ սերնդափոխությունը,
- հասուն և գերհասուն անտառներում համապատասխան անտառտնտեսական միջոցառումների իրականացում՝ երիտասարդ ծառուտների առաջացման նպատակով և այլն:

Անտառմշակույթների հիմնում.

- I-IV բոնիտետների 1 հա մակերեսից ավելի բացատներում, 1հա-ից պակասը վերագրել լանդշաֆտային փոքր բացատներին և թողնել ինքնավերականգնման,
- հատված տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում, 1հա-ից պակասը թողնել ինքնավերականգնման,
- հանքայնացման եղանակով բնական վերաճին օժանդակող միջոցառումներ (հարթակների պատրաստում և սերմերի ցանք) իրականացնել նաև անթրոպոգեն ծագման բավարար չվերականգված ոչ մեծ թեքությունների հատվածներում, ինչպես նաև ցածր լրիվության ծառուտներում,
- անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվող հատկապես համայնքամերձ տարածքները հնարավորինս մեկուսացնել՝ անասունների արածացումը բացառելու նպատակով:
- ցանկապատումը կատարել մետաղյա փշալարով, ինչպես նաև, օգտվելով տեղանքի աշխարհագրական դիրքի ընձեռնած հնարավորությունից, տեխնիկական հատկությունները կորցրած բնափայտով և ջախով:
- անտառտնտեսության տարածքում համաձայն «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույցի 2016թ.» սահմանազատված անտառներում իրականացնել համապատասխան միջոցառումներ:

Այս ամենից բացի նախատեսվում է նաև Էկոզբոսաշրջության զարգացման ծրագիր, որն էլ իր հերթին կնպաստի մի շարք կարևորագույն՝ բնապահպանական, սոցիալական, մշակույթային խնդիրների լուծմանը: Ինչպես նաև կհանդիսանա էկոլոգիական գիտելիքների և տեղեկատվության տարածման, տարածքների էկոլոգիապես անվնաս օգտագործման, բնապահպանական և սոցիալ-տնտեսական համակարգերի միջև լարվածության թուլացման և դրանց ինտեգրմանը նպաստող գործնական և արդյունավետ միջոց:

Այս ամենի հետ մեկտեղ կնպաստի նաև մարդկանց շրջակա միջավայրի պահպանման և գնահատման ընկալմանը, որպես եկամտի աղբյուր դիտարկելու տեսանկյունից:

Հաշվետվությունում ներառված է զերոյակա և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը և ընտրված տարբերակի հիմնավորումը:

Եզրահանգումներ. Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործունեությունները ընդգրկում են Լոռու մարզի՝ «Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների» տարածքները, որն իր մեջ ներառում է բնական

էկոհամակարգեր և լադշաֆտներ, հարուստ բուսական և կենդանական աշխարհ, ջրային և հողային ռեսուրսներ, բնության և պատմաշակույթային հուշարձաններ և այլն:

Անտառտնտեսության զարգացման համար հիմնական խոչընդոտներ են հանդիսանում մարդու տնտեսական գործունեությունները, ապօրինի, անկանոն, ոչ համակարգված անտառհատումները, արոտավայրերի ոչ ճիշտ կազմակերպումը, որն իր հերթին հանգեցնում է մի շարք անցանկալի երևույթների առաջացմանը և անդառնալի կորուստների, ինչպիսիք են բնական էկոհամակարգերի և լադշաֆտների ինքնավերականգնման խախտումը, տարածքի մասնատումը, դեգրադացիան, էռոզիոն երևույթները: Այս ամենը անդրադառնում է նաև բուսական և կենդանական աշխարհի կենսաբազմազանության վար, հանգեցնելով դրանց անհետացման ու ոչնչացմանը, տեսակների պոպուլյացիաների արէալների խախտմանը:

Բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության վրա ազդեցության վտանգավոր երևույթներից է նաև որսագողությունը, վնասատուների և հիվանդությունների դեմ քիմիական նյութերի միջոցով պայքարը, բուսականության չկանոնավորված մաքրումը և այրումը, օրգանական և անօրգանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտումը և մի շարք այլ երևույթներ, որոնք էլ հանգեցնում են մի շարք անցանկալի և անլուծելի խնդիրների:

Անտառների պահպանական և պաշտպանական սերմնային, տնկային միջոցառումները, մարդկային ռեսուրսների իրազեկումն ու ուսուցումը, տեղեկատվական, կրթական, ուսուցողական կենտրոնների ստեղծումը, անտառօգտագործման զարգացումը, կայուն անտառկառավարմանը նպաստող միջոցառումները կնպաստեն անտառների էկոհամակարգերի, կենսամիջավայրի բարելավմանը և կայուն զարգացմանը:

Հինադրույթային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպան միջոցառումների իրականացում, անտառի բնական ռեսուրսների ճիշտ օգտագործում, օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկուների իրականացում:

Նախատեսվող միջոցառումների համար հիմք են հադիսացել շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեյի «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ «Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների» 2021-2030թթ. անտառկառավարման պլանը, անտառտնտեսության ոլորտը կարգավորող մի շարթ ՀՀ օրենքներ, կառավարության որոշումներ և մի շարք միջազգային փաստաթղթեր: Ինչպես նաև ՀՀ անտառային օրենսգիքը (2005թ.) սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը:

Փորձաքննության ընթացքում Լոռու մարզի «Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի և Ջիլիզայի անտառտնտեսությունների» անտառկառավարման պլանի փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի է առնվել նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, Լոռու մարզպետարանում իրականացված հանրային քննարկումների ժամանակ բարձրացված առաջարկությունները:

Փորձաքննական պանջներ

- անտառների պաշտպանություն՝ վնասակար օրգանիզմների (վնասատուների և հիվանդությունների) կողմից անտառների ոչնչացման, չորացման, օգտակար հատկությունների կորստի կանխարգելմանը և սանիտարական վիճակի բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում,

- հատված տարածքներում վերականգնման աշխատանքների իրականացում, նպաստավոր պայմաններ ստեղծելով հիմնական անտառակազմող արժեքավոր ծառատեսակների համար,
- գյուղատնտեսական և անասնապահական գործունեությունները նվազեցնելու օրինակելի ձևերի և մեթոդների ներդրում,
- վնասատուներից և հիվանդություններից տնկարանների պաշտպանության աշխատանքների իրականացում,
- վերականգնված 1-2 հասակային դասերի ծառուտներում լուսավորման և մաքրման հատումների իրականացում (մատղաշի խնամք), հեռացնելով ոչ ցանկալի տեսակները և դրանց փոխարինումը հիմնական անտառակազմող ծառատեսակներով,
- առանձնակի ուշադրություն դարձնել հակահրդեհային միջոցառումների իրականացմանը, այդ թվում նաև ջրի ամբարտակների կառուցմանը և ճանապարհների բավարար անցողունակությանը,
- անտառային տարածքների գույքագրման և գնահատման արդյունքներով համայնքների կադաստրային քարտեզագրման հետ բացահայտված անհամապատասխանությունների ճշտում և ճշտված քարտեզների սահմանված կարգով տրամադրում համապատասխան գերատեսչություններ՝ ամրագրելու նպատակով,
- անտառմշակույթների հինման իրականացում,
- սերմնաբուսակներով և խոշոր տնկիներով անտառմշակույթների լրացման աշխատանքների կատարում,
- անտառմշակույթների ոռոգման աշխատանքների իրականացում,
- հատված տարածքներում և անթրոպոգեն նոսրուտներում ինքնավերականգնման նպաստում,
- էկոտուրիզմի զարգացում և խթանում,
- անտառի ռեկրեացիոն դերը, ինչպես նաև նրա նշանակությունը զբոսաշրջության զարգացման համար, որը կարող է նպաստել բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը և անտառների ճնշման նվազեցմանը,
- նախատեսվող անտառվերականգնման միջոցառումների տարածքներում, հատկապես համայնքամերձ տարածքները հնարավորության դեպքում անասունների մեկուսացում արածացումը բացառելու նպատակով: Մետաղյա փշալարով ցանկապատում, ինչպես նաև հնարավորության դեպքում տեխնիկական հատկությունները կորցրած բնափայտերի և ջախերի օգտագործում՝ ցանկապատում իրականացնելու նպատակով,
- համապատասխան միջոցառումների իրականացում ըստ «Հայաստանի բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույցի 2016թ» սահմանազատված անտառներում,
- բնապահպանական նպատակների իրագործման համար առաջարկվող միջոցառումների ծրագիրը՝ նախնական ֆինանսական գնահատմամբ,
- իրականացնել հանքայնացման եղանակով բնական վերաճին օժանդակող միջոցառումներ, այդ թվում նաև անթրոպոգեն ծագման բավարար չվերականգված ոչ մեծ թեքությունների հատվածներում, ցածր լրիվության ծառուտներում,
- հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված միջոցառումները նախատեսված ժամանակահատվածում կատարում,
- հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկումների իրականացում, հետ նախագծային ծրագրի կազմակերպում:

Եզրափակիչ մաս

ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի կողմից ներկայացված Լոռու մարզի «Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր և Ջիլիզա անտառտնտեսությունների» կառավարման պլանի փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Առաջին կարգի մասնագետ՝ Ն.Նասիբյան